

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2

ԱԻՆ «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ի կարիքների համար «ՃԿՊԱ-ԳՀԱՊՁԲ-Հ-21/05» ծածկագրով գնանշման հարցման ձևով համակարգչային տեխնիկայի ձեռքբերման գնում կատարելու ընթացակարգի նիստի

**Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ ք.Երևան Ավան Աճառյան 1 հասցեում
25 մարտի 2021թ., ժամը՝ 16:00**

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

1. Վահագն Կրբեկյան՝ «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ի ԱԻ և ՃԿ ֆակուլտետի դեկանի տեղակալ

Անդամներ՝

2. Վարդան Սարգսյան՝ «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ի ԱՅ-ԹԻ խմբի ծրագրավորող,
3. Հասմիկ Հարությունյան - «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ի ՂԿՈԲ ֆակուլտետի ավագ մեթոդիստ

Քարտուղար՝

4. Ռուզաննա Մկրտչյան - «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ի գնումների գծով մասնագետ

Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հրավերում կատարվող փոփոխության առաջացման պատճառը
2. Հաստատել փոփոխված հրավերի տեքստը և հայտարարությունը.
3. Հաստատել հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Հրավերում կատարվող փոփոխության առաջացման պատճառը

Համաձայն ՀՀ Պետական վերահսկողական ծառայության գլխավոր քարտուղարի կողմից ուղարկված 25 մարտի, 2021թ. Ե/315-21 գրության՝ «ՃԿՊԱ-ԳՀԱՊՁԲ-Հ-21/05» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերում ներառված պայմանագրի նախագծին կից տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով ձեռք բերվող «Համակարգչային տեխնիկա» գնման առարկաների 1-ին և 4-րդ չափաբաժինների բնութագրերում հատկանիշների փոփոխություն:

2. Ընթացակարգի փոփոխված հրավերի տեքստը հաստատելու մասին

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածով՝ գնահատող հանձնաժողովն իր իրավասության շրջանակներում որոշեց.

հաստատել «ՃԿՊԱ-ԳՀԱՊՁԲ-Հ-21/05» ծածկագրով՝ համակարգչային տեխնիկայի ձեռքբերման նպատակով գնանշման հարցման ձևով գնումներ կատարելու ընթացակարգի փոփոխված հրավերի տեքստը և հրավերում փոփոխություններ կատարելու մասին հայտարարությունը /կցվում է/

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:


**3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը,
ժամը և վայրը հաստատելու մասին**

«ՃԿՊԱ-ԳՀԱՊՁԲ-Հ-21/05» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման նպատակով հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել տեղեկագրում գնումների հայտարարության և հրավերի հրապարակման օրվանից հաշված 7-րդ օրացույցային օրը՝ ժամը 09.00-ին, ք.Երևան, Ավան Աճառյան 1 հասցեով՝ ԱԻՆ «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ի շենքում, 101 սենյակ:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:


Հանձնաժողովի նախագահ՝

Վ.Կրքեկյան




Անդամներ՝

/Վ.Սարգսյան



Հ.Հարությունյան



Քարտուղար՝ Ռ.Մկրտչյան

